ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«06» դեկտեմբերի 2022թ. N 74-Ա

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «ԱՌՍ-ՇԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հոկտեմբերի 12-ի գրությունը և Երևանի քաղաքապետի 2022 թվականի փետրվարի 3-ի N 330-Ա որոշումը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2012 թվականի ապրիլի 6-ին «ԱՌՍ-ՇԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում N 15388 շինարարության իրականացման լիցենզիան և լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի N 15388-01 ներդիրի գործունեության կասեցումը համարել վերացած 2022 թվականի հոկտեմբերի 17-ից:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

- ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

- համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի՝ սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

12/6/2022

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ